ԿԱՐԾԻՔ
Սուրեն Սերյոժայի Աբրահամյանի
«Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը»
դոկտորական ատենախոսության վերաբերյալ

Նորագույն և արդի ժամանակաշրջանի հայ գրականության,հատկապես քերթողական արվեստի, քերթվածի սկզբունքների պաշտպանությունը, տիպաբանական, տեսաքննական հարցադրումները, հիմնախնդիրները մշտապես եղել են մեր մեծերի ուշադրության կենտրոնում: Մեր գրականագիտական միտքն այս առումով հարուստ է բազմաթիվ դիտարկումներով: Դրանցից հիշենք մի քանիսը: Այսպես, XX դարասկզբը նշանավորվեց Մ. Մեծարենցի «Ինքնադատութեան փորձ մը» (1906), Տիրան Չրաքյանի «Ներաշխարհըն իր հեղինակէն դիտուած», «Ո՞վ է «սկզբնատիպ» բանաստեղծը և «Ի՞նչ է ճշմարիտ բանաստեղծությունը, Ե. Չարենցի «Ինչ պետք է լինի արդի հայ բանաստեղծությունը» (1922), «Արդի ռուսական պոեզիան» (1923) պրոբլեմատիկ ու մանիֆեստային հոդվածներով, իսկ դարեվերջին գրական ու գիտական նոր խնդիրներ առաջադրվեցին՝ նախորդների առաջ քաշած դրույթների հիման վրա: Պ. Սևակի՝ «Դեպի մեծ ուղեծիրը» (1962), «Ե. Չարենցը և արդիականությունը» (1967), «Իմ նյութը մարդն է» (1964), «Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն» (1966), «Դժվարը իրենից հասուն լինելն է» (1969), «Ինչ-ը, ինչպես-ը և որպես-ը» (1971) եւ այլ գործեր գիտական նորարական դրույթներ են պարառում իրենց մեջ: Մեր երեւելի գեղագետները, կարելի է ասել, բացեցին *հետաքրքիր, հերմենևտիկ և աքսիոլոգիական քննադաշտ:*

Հարցադրումները նորովի են իմաստավորվում մեր օրերում: Ակնառու օրինակ կարող է հանդիսանալ Սուրեն Աբրահամյանի «Հայ նորագույն գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ներկայացված «Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը» ատենախոսությունը:

Նկատելի է, որ ուսումնասիրությունն իր տեսակի մեջ գեղագիտական մտքի տարածքն ամբողջացնող եզակի ու համապարփակ գրականագիտական աշխատանք է, որը ողջունելի է:

«Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը» աշխատանքը բաղկացած է «Ներածություն»-ից, չորս գլխից (գլուխ առաջին՝ «Քննադատությունը և գրական ընթացքը. պատմական ակնարկ», գլուխ երկրորդ՝ «Ռազմիկ Դավոյանի բանաստեղծական ժառանգությունը», գլուխ երրորդ՝ «Իրականության պոեզիա. «Ապոետիկ սկզբի» կամ բանաստեղծություն «անհետացման» տեսության», գլուխ չորրորդ՝ «Պոեզիայի իրականությունը. բառի մետաֆիզիկական նախասկզբի որոնումը»), եզրակացություններ և օգտագործված գրականություն բաժիններից:

Ատենախոսի հարցադրման կառուցակարգն արդի գրական ընթացքը մեկնաբանելու, ստեղծագործական ուղին տեսականորեն բացահայտելու, ներքին պարբերացումը ճշտելու, սահմանելու մեջ է ընկալվում՝ *ժխտման* և *էվոլյուցիայի* տեսությամբ, մի ընթացք, ինչը նախանշում է «թե՛ շարժումը և թե՛ շարժման ընթացքի պայմանականությունը որպես գրական միասնության արտահայտություն»:

Երեւութի հաստատման բանաձևումները փաստվում է նաև Նիցշեի և Իսահակյանի ասույթներում՝ «զվարթ գիտության» մեկնաբանումներում,

որտեղ *ժխտումը* որպես հաստատական միավոր է ներկայանում, պայմանականության հիմունքը նախանշում և սահմանում, ժխտման և էվոլյուցիայի տեսությամբ գրական նոր շրջափուլ է ազդարարում՝ նոր պատմական համակարգի հաստատմամբ:

Գրականության ընթացքի միասնականությունը՝ համակարգերի ներսում, հեղինակը «իբրև պատմական ամբողջականության» արտահայտություն է դիտում, միաժամանակ այն ներկայացնում իբրև շարժման պրոցես :

«Հայրերի» և «որդիների», հնի և նորի առճակատումներում, նորի ու թարմ հաստատման օրինակներում, բացասման բացասումի փիլիսոփայական մեկնաբանական սուզումներում Ս. Աբրահամյանը որպես օրինակ մատնանշում է Պ. Սևակին՝ համազրական երևույթը դիտարկում վերջինիս առաջադրած «բանաստեղծական անբանաստեղծության», «գիտական անգիտության»՝ «զվարթ գիտության»-բանաստեղծության ինքնատիպ տեսությամբ, ցույց տալիս ժամանակակից մարդու «հոգեկան ներանձավային լաբիրինթոսները»:

Ատենախոսն անդրադառնում է գրականության ընթացքի մեկնաբանման գործում սևակյան պոլեմիկայի շարքը լրացնող գրողներ Հ. Էդոյանի «Բառի որոնումը», Հովհ. Գրիգորյանի «Թե ինչպես անհետացավ բանաստեղծությունը» քննումներին, որոնք որպես գրական մանիֆեստի արժեք է դիտում՝ հետսևակյան շրջանի նոր պոեզիա, ընդգծում վերջինիս ուղղությունները:

Սուրեն Աբրահամյանը ատենախոսության մեջ հարցադրման իր տեսությունը շարունակելով՝ գրական նորույթ է բացահայտում Վ. Պետրոսյանի («Հավասարում բազմաթիվ անհայտներով»), Հր. Մաթևոսյանի («Այսպես կոչված գյուղագրության մասին»)՝ 60-ականների, 80-ականների և նոր գրականության՝ 90-ականների արժեքաբանական մեկնաբանություններում՝ խորքով ու նորովի մեկնաբանելով հետսևակյան և հետմաթևոսյանական գրականության ընթացքը:

Ատենախոսն իր խնդիրն է համարում՝ գիտականորեն ներկայացնել ***«գրականության արդի շրջանը համակարգի ներսում՝ շարժման և պատմական ընթացքի մեջ՝ շրջանցելով մանրամասները»*** (6):

Քանի որ էութականության անընդհատականությունը պայմանական գործընթաց է գրականության մեջ, ուստի հեղինակը կարևորում է նաև համակարգի պայմանականության խնդիրն իր ելակետային նշանակությամբ հանդերձ:

Քննադաշտում Հովհ. Գրիգորյանի, Ա. Հարությունյանի, Դ. Հովհաննեսի, Հ. Էդոյանի, Հ. Մովսեսի, Էդ. Միլիտոնյանի, Հր. Սարուխանի, Հր. Թամրազյանի, Ա. Մարտիրոսյանի, Ռ. Դավոյանի, Ա. Ավդալյանի, Վ. Հակոբյանի պոետական շարքերի, մշակույթի, խառնվածքի բացահայտումներն են, տիպաբանական անցումներն՝ իրենց բանաստեղծական և մեկնողական, քննական ենթատերով: Ատենախոսն ընդհանրացնում է ասելիքն Օ. Շպենգլերի հետևյալ սահմանմամբ. «Բոլոր մեծ մշակույթները մեծ պարտության հետևանք են» (էջ 18), քանզի ըստ Ս. Աբրահամյանի՝ «ժխտումը սահմանում է օրինաչափությունը»:

Բանավեճն, ընդհանրապես, որպես գրական ժանր միաժամանակ օգնում է պոեզիայի սկզբունքներին վերաբերող հարցադրումներին պատասխանել, արդիականության գաղափարը և այլ հիմնահարցեր պարզել՝ առաջադրելով ամենակարևորը՝ ի՞նչ է պոեզիան, որո՞նք են պոետիկայի առանձնահատկությունները, «հանունը և ընդդեմը » և այլն և այլն:

Ս. Աբրահամյանը կարևորում է գրականագիտության և քննադատության նախորդ փորձի տեսությունը, հատկանշում քննական մտքի ներկայացուցիչների՝ Ալ. Թոփչյանի («Բառի սահմանները» (1974, 1978), «Ապագայի ներկայությամբ» (1985), Վ. Օշականի «Հայաստանի երիտասարդ բանաստեղծները» (1980, «Բագին»), Ս. Աղաբաբյանի «XX դ. հայ գրականության զուգահեռներում» (1984), «Դասականներ և ժամանակակիցներ» (1986) գրքերը, Ս. Սարինյանի «Գրական սերնդի դիմագիծը» հոդվածը, Զ. Ավետիսյանի «Գեղարվեստական մտածողության հետքերով» (1985) հոդվածաշարը, Ժ. Քալանթարյանի «Ուրվագծեր արդի հայ գրականության» (2006) պատմական ակնարկը եւ այլ գործեր:

«Ավանդույթ և անհատ-տաղանդ» հոդվածում Թոմաս Ս. Էլիոթը, արվեստի մեջ հնի և նորի փոխհարաբերության հարցի մասին հետևյալ կարևոր դիտարկումն է անում. «Արվեստի գոյություն ունեցող հուշարձանները կազմում են մի իդեալական կարգ, որը ձևափոխում է նոր (իսկապես նոր) գործի ներմուծմամբ: Եղած կարգը կատարյալ է, նախքան նոր գործի հայտնվելը. քանի որ կարգը պիտի պահպանվի նորույթի ներմուծումից հետո, ամբողջ առկա կարգը, թեկուզ երբեմն շատ աննշան, պետք է փոխվի, հետևաբար արվեստի յուրաքանչյուր գործի հարաբերությունները, համամասնություններն ու արժեքները ամբողջի նկատմամբ վերահաստատվում են: Սա հնի և նորի համապատասխանությունն է: Նա, ով հավանություն կտա կարգի մասին այս գաղափարին, եվրոպական ու անգլիական գրական այս կառույցին, անիմաստ չի համարի այն միտքը, թե ներկան պիտի վերափոխի անցյալը այնչափ, որչափ որ անցյալը կառավարում է ներկան», Թոմաս Ս. Էլիոթ, Մեռյալ երկիրը, Ե., Ապոլոն հր., 1991, էջ 115:

Ս. Աբրահամյանի առաջ քաշած թեզը այլ ձևաչափում է քննության ասպարեզ բացում՝ հերքման եւ հաստատման տեսությամբ: Ըստ մեկնաբանի՝ ժխտումը հաստատական միավոր ընդունելով, սահմանում է պայմանականության հիմունքը, համաձայն որի, յուրաքանչյուր գրական պարբերաշրջան, էվոլյուցիայի և շարժման ընթացքով ձևավորում է նոր պատմական համակարգ: Արդի հայ բանաստեղծության զարգացման ընթացքը «ճգնաժամային» է՝ իբրև շարժման պրոցես, ըստ բանախոսի՝ «ճգնաժամը որոնման, ժխտումը՝ նորը հիմնելու պրոցես է» (սեղմագիր, էջ 3):

Նույնն է նաև արդի հայ պոեզիայի ուսումնասիրության ելակետը: Համակարգի պայմանականության խնդիրը հեղինակի վերլուծություններում ելակետային նշանակություն ունի: Արդի հայ պոեզիայի վերջին կեսդարյա շրջանն, այդ իսկ պատճառով, սկսած նախորդ դարի 60-ականներից, ըստ ուսումնասիրողի «իբրև համակարգի ձևավորման ու ամբողջացման պատմություն, ընկալվում է որպես հերմենևտիկական»: Աբրահամյանը գեղագիտական մտքի զարգացման յուրաքանչյուր ժամանակահատված որպես պատմական մի շրջափուլ է ընդունում՝ նախորդը ժխտելու, սկզբնավորման և ամբողջացման իր ընթացքով հանդերձ, որն անշուշտ, գրականագիտական արդի հիմնախնդիրներից մեկն է հանդիսանում:

Գիտական աշխատանքի հիմնանյութ են ծառայել հետսևակյան շրջանի հայ բանաստեղծության ավարտի և նորի սկզբնավորման լուսաբանման հարցերը: Այս համապատկերում Ս. Աբրահամյանը կարևորում է Ռ. Դավոյանի ստեղծագործության ուսումնասիրությունը, ապա՝ արդի պոեզիայի նախահիմքերի քննաբանության հարցը՝ «ապոետիկ սկզբի» և բառի մետաֆիզիկական նախասկզբի տեսության քննությունը:

Մեկնաբանական հսկայածավալ քննություն է կատարվել ուղղության սկզբնավորող բանաստեղծների՝ Հովհ. Գրիգորյանի, Հ. Էդոյանի, ապա նաև՝ Արտ. Հարությունյանի, Դ. Հովհաննեսի, Հ. Սարուխանի, Ա. Մարտիրոսյանի, Հ. Մովսեսի, Վ. Հակոբյանի, Ս. Չիլոյանի և մյուսների ստեղծագործությունների շուրջ:

Գրականության այս շրջափուլի պոետական մշակույթի, սկզբունքների, մետաֆիզիկական մտասևեռումների դիտարկումն էլ հանդիսանում է ատենախոսության հիմնական նպատակն ու խնդիրը, այսինքն՝ տալ հայ բանաստեղծության վերջին կեսդարյա շրջանի ընթացքի ձևավորումն ու ամբողջացումը, տիպաբանական առանձնահատկությունները, հերքման ու հաստատման փիլիսոփայական, գրականագիտական ընդգրկումներն ու այդ ամենի ընդհանուր նկարագիրը:

Որպես գրապատմական համակարգի ընդհանրացված ամբողջական փորձ, Ս. Աբրահամյանի ատենախոսությունն իր տեսակի մեջ եզակի ուսումնասիրություն է, քանի որ մինչ այդ գրականագիտությունը պարզապես (բացառությամբ առանձին անհատների) ամբողջական տեսքով քննության չի ենթարկել արդի հայ պոեզիան վերջին կեսդարյա կտրվածքով:

Քննաբանի գրականագիտական մղումն էլ միս ու արյուն է ստացել հերքման և հավելման փիլիսոփայական մղումով:

Ուսումնասիրության չորս գլուխներում (իրենց ենթագլուխներով հանդերձ), այսպիսով Ս. Աբրահամյանն ամենայն բծախնդրությամբ ու ամբողջական նկարագրով մեկնաբանել և արժևորել է կեսդարյա ճանապարհ անցած արդի հայ քնարերգությունն իր մակընթացություններով ու տեղատվություններով՝ ճգնաժամի և որոնման և նորի հաստատման) միջոցով:

Իսկ այդ ամբողջ գրականագիտական շարժն ընթացել է պոլեմիկայի, բանակռիվների, հերքումի ու հաստատման բախումներում՝ բառի ու պոետական մտախառնվածքի, մշակույթի տարաբնույթ դրսևորումներում, բանաստեղծական ու ժամանակի ոճերի առճակատումներում, պոետների պոետական պահվածքներում՝ յուրաքանչյուրն իր բանաստեղծական ընկալումներով, բանավիճային անաչառ ու աչառու մեկնաբանություններով, ամրակոչված երկխոսական ու վերլուծական ձևույթներով, կողմնորոշումներով բացահայտված:

Ս. Աբրահամյանի վերլուծական և արժեքաբանական դաշտում իր իսկ կողմից առանձնադիտված բանաստեղծներն են իրենց արարված երկերով, քննական հայացքներով, իրենց ելակետային դրույթներով, ներկայացված առանցքային հարցումներով՝ քերթվածի ու քերթողական արվեստի յուրովի ընկալումներով, իրենց պատմական ենթատեքստերով, շարժման և ընթացքի փիլիսոփայությամբ, տիպաբանական շերտերով, բացասման բացասումի միջանցքներով վերհանված, որոնք ըստ կարգի ու համակարգի քննաբանված և մեկնաբանված, արժևորված են «Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը» ստեղծագործության մեջ արդի հայ գրականության ընդհանուր ֆոնին համահունչ:

Աշխատանքում կան որոշակի լեզվական, շարահյուսական սայթաքումներ, որոնք որակ չեն կազմում և չեն նսեմացնում գիտական աշխատանքի արժեքայնությունը. Չպետք է վերջին գնահատանքի, եզրահանգման խոսքը դնել «Եզրակացություններ» բառակապակցության տակ, այլ ըստ պահանջի նշել «Եզրակացություն»:

Աբրահամյանի ներկայացրած հսկայածավալ գիտական աշխատանքի ուսումնասիրման նյութը «վերջին կեսդարյա շրջանի հայ քերթողական արվեստի՝ պոեզիայի պատմության, գեղարվեստական համակարգի ձևավորման և ուղղությունների հարցն է» (սեղմագիր, էջ 3):

Գրականագիտությունը հարցի վերաբերյալ որոշակի առաջընթաց արձանագրել է, սակայն գրականագիտական այս երևույթն այսպիսի ամբողջական, համապարփակ ձևով, հիմնավոր տեսական քննության հայ գրականագիտության մեջ ներկայացվում է առաջին անգամ, որն ատենախոսության առանձնադիտված և արժեքավոր ձեռք բերումներից հիմնականը պետք է ընդունել:

Ս. Ս. Աբրահամյանի ներկայացրած «Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը» ուսումնասիրությունը,հիրավի, գիտական կուռ կառուցվածքով ու բովանդակությամբ բարձրարժեք աշխատանք է, ծանրակշիռ նորույթ, եւ ես միջնորդում եմ, որպեսզի ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհի նրա հեղինակին:

Վ. Ս. Հակոբյան
Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի»պետհավատարմագրված համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր